Հետք պարբերականի լրագրող Մեդա Ղուկասյանին
ՀՀ ԱԺ պատգամավոր Տիգրան Ուրիխանյանի
օգնական Ա. Ավագյանից

Հարգելի՛ Մեդա Ղուկասյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախորդ գումարման ԱԺ աշխատանքների ընթացքում պատգամավոր Տ. Ուրիխանյանը հանդես էր եկել օրենսդրական նախաձեռնությամբ, որով առաջարկում էր փոփոխություն իրականացնել ԱԺ Կանոնակարգ օրենքում՝ պարտադիր դարձնելով ԱԺ պատգամավորի համար քաղաքացիների ընդունելությունը՝ հստակ պարբերականությամբ: Սակայն քաղաքական մեծամասնությունը քվեարկությամբ մերժեց այդ նախագծի ընդունումը:

Ինչպես 5-րդ, այդպես էլ 6-րդ գումարումների ընթացքում պատգամավորն իրականացնում է քաղաքացիների անդադար ընդունելություն: Ընդունելությունները տեղի են ունենում ինչպես անհատական, այնպես էլ խմբակային, առանձին կոլեկտիվների, սոցիալական խմբերի, հասարակական նախաձեռնությունների և տարատեսակ խնդիրների շուրջ միավորված քաղաքացիների հետ: 5-րդ գումարման ընթացքում պատգամավորը ներկայացրել է մի քանի տասնյակ օրենսդրական նախաձեռնություններ, որոնց մասին տեղեկությունը հասանելի է բոլորին, ինչպես նաև պահպանված է ԱԺ արխիվում: 6-րդ գումարման 1-ին և 2-րդ նստաշրջաններում պատգամավորը հանդես է եկել «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու օրենսդրական նախաձեռնությամբ: Քաղաքացիներից ստացվում են բազմաթիվ առաջարկներ տարատեսակ փոփոխությունների և նոր օրենքների վերաբերյալ, նշեմ, որ նմանատիպ առաջարկներով պարբերաբար հանդես են գալիս նաև տարբեր ոլորտների հասարակական կազմակերպություններ:

Մեծ ծավալ են կազմում կազմակերպությունների և քաղաքացիների այն դիմումները, որոնք վերաբերվում են պատգամավորի վերահսկողական գործունեությանը: Դրանց միշտ ընթացք է տրվում, ուղարկվում են հարցումներ և իրականացվում է տևական հսկողություն գործադիր իշխանության առանձին կառույցների, գերատեսչությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ:

Պատգամավորի բոլոր նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկություններ են հրապարակվում youtube-ի պաշտոնական հետևյալ ալիքում՝ https://www.youtube.com/user/TigranUrikhanyan:

Հարգանքով՝

պատգամավորի օգնական Ա. Ավագյան